50

1. Փրկիչը սեղան կկազմե՝
Մեր սովը կշտացնելու,
Իր զավակներուն կկանչե՝
Երկնից կերակուրն ուտելու։
Ահա սովամահ տեսնելով՝
Մեզի Իր մարմինը կուտա,
Մեզի համար զոհ ըլլալով՝
Իր մահը մեր կյանքը կըլլա։

2. Ուստի, եղբայրնե՛ր սիրելի,
Ուրախությունով մոտեցեք,
Ձեր Տերը ձեզի կխոսի.
«Մարմինս առեք ու կերեք»։
Անկեղծ ու խորին զղջումով
Այս սուրբ սեղանին մոտենանք,
Բոլոր մեր գործերն մերժելով՝
Միայն Հիսուսին հավատանք։

3. Ո՛վ Տեր, Դու մեր մեջ գտնվե,
Քու ներկայությունդ ցուցուր
Եվ այս Քու սեղանդ օրհնե,
Քեզնով մեր սրտերը լեցուր։
Խոսքիդ համեմատ կաղաչենք՝
Մեզի Քու հոգիդ պարգևե,
Եվ մինչ հոս մենք Քեզ կհիշենք,
Դուն ալ, ո՛վ Հիսուս, մեզ հիշե։

Պատրաստված է Հոգևոր Արխիվի Կողմից | hogevorarchive.com | ergaran.com | 2025